



“ՓՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՓԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1901

ԹԻՒ 2



ՋԱՏԻԿԸ

Եզիպտացւոց վրայ գալու ամենէն մեծ հարուածին ժամանակը հասած էր: Առաջին ինը հարուածներուն յառաջ բերած բոլոր մեծ տառապանքներուն և կորուստներուն հակառակ, փարաւոն իսրայէլի թող չտուաւ երթալ: Բայց վերջին հարուածը Եզիպտացւոց ամէն մէկ տունը սուգով լեցուց և «Ամէնք» ալ կը մեռնինք», ըսել տուաւ անոնց: Հարուածը պատահեցաւ կէսգիշերին, երբ խաւարը աւելի սոսկալի կ'ընէր զանիկա: Եւ անկարելի էր տարակուսիլ թէ Աս-

տուծոյ ձեռքէն եկաւ: Չէր գտնուեր տուն մը ուր մեռեալ մը չկենար, և մեռնողը միշտ անդրանիկ զաւակն էր: Եւ ոչ տեղ մը, սխալմամբ անդրանիկը ազատ մնալով, երկրորդ զաւակը մեռաւ: Գիտենք թէ ի՞նչ վիշտ և ի՞նչ ողբ ու կոծ տեղի կ'ունենայ երբ այսպիսի մահ մը կը պատահի տան մը մէջ: Բայց ո՞վ կրնայ նկարագրել կամ երևակայել այն ողբն ու կոծը, երբ այսպիսի վիշտ մը եկաւ Եզիպտացւոց ամէն մէկ տան վրայ:

Սակայն իսրայէլի որդիները մասնակից չեղան այդ վշտին: Անոնք չտեսան

իրենց որդիներուն յանկարծ իյնալ ու մեռնիլը, վասն զի երբ սատակիչ հրեշտակը տեսաւ անոնց դռներուն դրանքիքներուն վրայ քսուած արիւնը, անցաւ անոնց տուներէն: Եւ այդ նոյն գիշերը անոնք ելան Գետնալի երկրին մէջ ունեցած իրենց տուներէն, ալ երբեք հոն չվերադառնալու պայմանաւ: Չատիկը կերան իրենց կօշիկները հագած, և պատրաստ՝ ճամբայ ելլելու, կերակուրն ուտելէ անմիջապէս ետքը:

Պօղոս առաքեալ կ'ըսէ, «Բրիստոս մեր զատիկը մեզի համար զոհուե-

ցաւ։” Հարցուցէք ձեր ծնողներուն կամ վարժապետներուն թէ ի՞նչ կը նշանակէ այս խօսքը, և թէ զատկը ի՞նչպէս ֆրիստոսի նշանակն էր։

ԱՌԱՋԱԿՆԵՐՈՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Յուրտ, անզգայ և անտարբեր չարագործներ են իտալացի աւազակներէն շատը։ Բայց նախանձաւոր են իրենց զաւակներուն հոգևոր բարեւուութեան։ Տեսնուած է շատ անգամ որ բռնի մտած են գեղ մը և պահանջած են որ իրենց զաւակները մկրտեն եկեղեցւոյ լիակատար արարողութիւններով։ Երբեմն ուրիշ կերպի մը կը դիմեն։ Քահանան իրենց լեռնային ամուր տեղերը կը տանին։ Այսքան մեծ է անոնց փափաքը իրենց զաւակներուն կեանքին պատշաճ սկզբնաւորութիւն մը տալու։ Կաթոլիկ եկեղեցւոյ եպիսկոպոսներէն մէկը շահեկան բան մը կը պատմէ աւազակներու մկրտութեան մը վրայ, որուն մէջ դեր մը կատարած էր ակամայ։


Յիշեալ եպիսկոպոսը կը ճամբորդէր լեռներուն մէջ, և հաճա աւազակները վար իջան անոր վրայ և զանիկա իրենց ամբողջ տարին։ Հոն շատ մեծարանքով վարուեցան անոր հետ։ Ճոխ խնձոյք մը պատրաստուած էր անոր համար, և ամենէն ընտիր գինիներն հրամցուեցան։ Այր և կին մարդիկ իրարու հետ կը մրցէին զանիկա պատուասիրելու մէջ, և եպիսկոպոսին իր հիւրընկալներուն արհեստին մասին տեսած միտիայն նշանները լեցուած հրացանները և երկայն դանակներն էին — անոնց յարձակելու և իրենքզիրենք պայտպանելու զէնքերը։

Յաջորդ առաւօտ, նախաճաչէն ետքը, աւազակապետը անոր մօտեցաւ և ըսաւ քաղաքավարութեամբ բայց հաստատ կերպով, «Միկրտէ զաւակս, և անունը դիր ճուղէփիէ։ Ընդունէ զանիկա սուրբ եկեղեցին, եթէ ոչ քեզ կը կախեմ։» Մանկիկը մկրտուեցաւ և օրհնուեցաւ, և ծնողները գոհ եղան։ Ուրիշ սեղան մը տրուեցաւ, և յետոյ բարեացակամութեան ամէն արտայայտութիւններով ճամբայ հանուեցաւ եպիսկոպոսը։ Ոչ միայն զանիկա կողպտելու ձեռք չզարկին, հապա բռնադատեցին զանիկա տոպրակ մը ոսկի տանիլ եկեղեցիին նուէր։ Անոր բարի ծառայութիւնները չմոռցուե-

ցան, և տարուէ տարի երբ մկրտութեան տարեդարձը կու գար, արժանապատիւ եկեղեցականին համար նուէր մը կը ձգուէր այն կրօնական տան դուռը, որուն հետ կապակցութիւն ունէր անիկա։

ՀԵՐՄՈՆ ԼԵՌԱՆ ԴՊՐՈՑԸ

Ասիկա մանչերու դպրոց մըն է Մասաչուսեց նահանգին մէջ, և ֆոնէթիքըթ գետին վրայ որ Նորթֆիլտի դիմացը կ'իյնայ։ Ունիւք 1898—9ի ցուցակը ուր կը կարդանք թէ յիշեալ դպրոցը Մր. Մուտիի թելադրութիւնովը և եռանդուն փափաքին համեմատ հիմնարկուեցաւ քանի մը աղջիւ անձանց ձեռք, որոնք կը փափաքէին տղայոց և երիտասարդներու գործօն ֆրիստունէական դաստիարակութեանը։ Այդ աղջիւ անձերէն մէկը 25,000 տոլար տուաւ, և ուրիշներ աւելի փոքր գումարներ տուին Հաստատութեան հա-



մար։ Դպրոցը բացուեցաւ 1881ին, և առաջին երկու տարիներուն մէջ աշակերտներուն թիւը 25ը չանցաւ։ 1898 Սեպտեմբերին 400 աշակերտներ կային։ Շէնքը բլուրի մը կողին վրայ է, և ընդարձակ տեսարանի մը դիմաց լաւագոյն առողջապահական գիրք ունի։ Այս դպրոցը այնպիսի երիտասարդներու համար է որ առողջ մարմնի, առողջ մտքի և բարձր նպատակներու տէր են։ Մոլի և ծոյլ տղաք չեն ընդունուիր, ոչ ալ այնպիսիներ որ աղէկ յառաջդիմութիւն չեն ցուցած ուրիշ դպրոցներու մէջ։ այլ անոնք միայն որ լուրջ նպատակ մը ունին կեանքի համար, և ճշմարտապէս կը փափաքին օգտակար դաստիարակութիւն մը ընդունիլ և աւելի ծանօթութիւն և հմտութիւն ստանալ Աստուածաշուքին վրայ։ 1899 Յունուար ամսուն 1ին աշակերտներուն միջին տարիքն էր 20, որմէ կը հասկցուի թէ դպրոցը մանր տղոց համար չէ։ Ինը չէնքեր կային բաց ի ամբարանոցներէն, ձիերու և կովերու ախոռներէն և

լուացարանէն (չամաշրխանէ), Պատկերին մէջ ամենէն նշանաւոր շէնքն է ֆրոսթ Սրահը, որ նշարաններէն մէկն է, և միւսը ճաշարան Սրահն է, և անոնց մէջտեղ կայ հողմաղաց (եէլ տէլիոմէնի) սը։ Աշակերտի մը վճարելիք ամբողջ թոշակը 59 տոլար (իրը 13 ¹/₁₀ Օսմ. ոսկի) է մէկ մասնաւոր շրջանի համար։ Տարուան մէջ երեք մասնաւոր շրջան ունի դպրոցը։

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՆՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Թէպէտ Ենոնդն անցած է, բայց տակաւին այնքան թարմ է անոր յիշատակը մեր մտքին մէջ որ տարածամ պիտի չըլլայ, եթէ մեր փոքրիկ ընթերցողներուն պատմենք հին անդալկան պատմութիւն մը, զոր Ռուսիոյ գեղացիները կը յիշեն երբ Ենոնդի տօնը կու գայ։ Կըսեն թէ շատ երկար ժամանակ առաջ, ֆրիստոսի Ենոնդին ատենը, Արեւելքէն եկող երեք մագերը, երբ կը ճամբորդէին դէպ ի Բեթլեհէմ, աստղին լուսովն առաջ նորդուելով, Պապուշքա անուն կնոջ մը տան քովէն անցան։ Անիկա լսեց անոնց ուղտերուն ոտքի ձայները, և բացաւ պատուհանները և հարցուց թէ ո՛ւր կ'երթան։ Մագերը պատասխանեցին

թէ իրենք կ'երթան մանկիկ մը փնտռելու որ թագաւոր է, և կնոջն ըսին որ ինք ալ իրենց հետ ընկերանայ զանիկա փնտռելու համար։ «Ես չեմ կրնար գալ», պատասխանեց Պապուշքա, «մինչև որ նախ չաւլեմ տունս։» Ուստի կարաւանը իր ճամբան գնաց առանց անոր։ Երբ քիչ մը ետքը Պապուշքա տունն աւելց և ճամբայ ելաւ, չկրցաւ հասնիլ մագերուն։ Այսպէս երբեք չգտաւ Բեթլեհէմի ճամբան, ոչ ալ տեսաւ մսուրին մէջ պառկած Մանկիկը։ Բայց այդ գիշերէն ի վեր Պապուշքա կը թափառի աշխարհիս վրայ, և ամէն տեղ կը փնտռէ ֆրիստոս մանուկը։ Կը կայնի և ուշադրութեամբ կը նայի ամէն մէկ պատահող մանուկի, յուսալով թէ ասիկա ըլլայ Անուանոր սիրոյն համար ամէն մանուկ սուրբ և սիրելի կը համարի։ Ուստի Ռուսիոյ մէջ Պապուշքա մանուկներու պայտպան կը նկատուի։ Հոն կը հաւատան թէ անիկա անոնց ընծաները կը բերէ այն նոյն կերպով որով Սանթա ֆրոյզ ընծաները կը բերէ մանուկ-

ներուն Գերմանիոյ և Անգղիոյ մէջ : Այս սիրուն և գեղեցիկ պատմութիւնը երկու յայտնի դաս կը պարունակէ : Նախ, սա գաւաթ թէ Պէտք չէ որ երբեք պատեհութիւն մը կորսնցընէք կամ պատճառանքներ մէջ բերելով ետ կենաք երկնային կոչումէն : Եթէ կորսնցնէք պատեհութիւնը, երբեք նորէն ձեռք չէք կրնար բերել զանկա, որչափ ալ աշխատիք : Չեր տունը կրնայ ամէն կերպով և ամէն կողմով մաքուր և կոկիկ ըլլալ, բայց գուցէ ուշ պիտի մնաք Բեթլեհէմ հասնելու համար : Մանաւանդ, երբ Քրիստոսի ծառայելու հրաւերը ձեր ականջներուն կը հնչէ, երբեք մի թողուք որ աշխարհային չնչին բաները ձեզ այնպէս զբաղեցնեն որ հրաւերին հնազանդելու կարող չըլլաք :

Այս պատմութեան երկրորդ դասն է այն որ կը քարոզուի բովանդակ աշխարհի վրայ, և մանաւանդ՝ երբ Իսուսի Տօնը կու գայ : Նոյն ինքն մեր Տէրը ըսաւ իր բերնով, «Չգուշացէք որ շանարգէք աս պղտիկներէն մէկը» : Եւ մենք պէտք է որ ամէն մէկ մանկիկի երեսին վրայ յստակ տեսնենք պատկերն Անոր որ մանկիկ մը եղաւ մեզի համար : Վասն զի պղտիկները իր սեպհական ստացումքը անուանեց, և մանկութիւնը իր ներկայութեան մէկ նուիրական նշանն ըրաւ : Եւ ըսած է մեզի կրկին և կրկին թէ աշխարհիս մէջ չկայ բան մը որ անմեղ մանկիկի մը չափ Աստուծոյ այդքան մօտ և այսքան նման ըլլայ :


---30---

ՀՆԴԿԱԿԱՆ ՎԷՊ ՄԸ

Հարաւային անտառներէն մէկուն մէջ ժամանակաւ կը բնակէր շատ սուրբ Մուսի (ճգնաւոր) մը, որ իր տարօրինակ ճգնութիւններով գրեթէ անսահման կարողութիւններու տէր էր և հրաշքներ կը գործէր : Անիկա նաև բարեսիրտ մարդ մըն էր : Օր մը տեսաւ որ ագռաւ մը փոքրիկ մուկ մը կը տանէր : Հրամայեց ագռաւին որ մուկը թող տայ, և ինք մեծցուց մուկը անոր ցորեն և բրինձ կերցնելով, մինչև որ անիկա չափահաս մուկ մը եղաւ : Օր մը երբ մուկը անոր քով կը խաղար, տեսաւ կատու մը, և սարսափով վազեց Մուսիին ոտքերուն քով, անոր ծոցը մտնելով պաշտպանուելու համար : «Եթե՛ղճ մուկ», ըսաւ Մուսի, «կատու եղիր» : Եւ այնպէս եղաւ : Կատուն հիմա սարսափ կու տար, բայց բան մը չէր զգար, մինչև որ օր մը շուն մը եկաւ : Կատուն ստկալով բարձրացուց կունակը : «Եթե՛ղճ կատու», ը-

սաւ Մուսի, «շուն եղիր» : Եւ այնպէս եղաւ : «Հիմա ո՛վ կը վախնայ», կը խորհէր շունը : Բայց օր մը տեսնելով վագր մը որ կը պտրտէր այն կողմերը, Մուսիին քով եկաւ ազին ոտքերուն մէջ առած : «Եթե՛ղճ շուն», ըսաւ Մուսի, «վագր եղիր» : Եւ այնպէս եղաւ : Վագրը կեցաւ Մուսիին քով, որ զանկա ուրիշ բան չէր սեպեր բայց միայն ընտանի մուկ մը : Մարդիկ զանոնք իրարու քով տեսնելով, կ'ըսէին, «Ահա սուրբը և վագրը որ ժամանակաւ մուկ մըն էր» : Ասոր վրայ վագրը սկսաւ մտածել ինքիսին, «Քանի որ Մուսիին կ'ապրի, ամէն մարդ պիտի գիտնայ թէ ես ի՛նչ ցած վիճակէ առաջ եկած եմ : Բարեմս պէտք է որ ազատուիմ անկէ» : Բայց Մուսիին տեսնելով թէ վագրը իր վրայ ցատկելու վրայ է, ըսաւ, «Չար վագր, նորէն մուկ եղիր» : Եւ այնպէս եղաւ : և ահա թռչուն մը յափշտակեց տարաւ մուկը, որ ա՛լ վար չիջաւ նորէն :

---30---



ՄՐ. ՄՈՒՍԻ

Այն անձը որուն պատկերը կը դրնենք այս երեսին վրայ, պէտք է որ իրաւամբ նկատուի աշխարհիս մէջ իննետասներորդ Գարու մեծագոյն ոյժերէն մին բարեքի համար : Անիկա չէր կոչուեր Պատ. Մր. Մուսի, եկեղեցականներու ձեռքեր չդրուեցան անոր վրայ, և աշխարհական մնաց մինչև իր կեանքին վերջը : Եւ թերևս անոր բարեք ընելու կարողութիւնը գործի այն մասնաւոր տեսակին մէջ որուն կը պարապէր, բուն իսկ ատոր համար աւելի մեծ էր : Մենք ձեռնադրեալ պաշտօնէութիւն կ'ընդունինք, և եկեղեցական մը որ կ'ապրի արժանաւոր կերպով և իր նուիրական պաշտ-

նին համեմատ վարմունք կը ցուցնէ, պէտք է որ մեծարանք և պատիւ ընդունի : Բայց եկեղեցիին մէջ կատարելու գործ կայ աշխարհականի համար, և Մր. Մուսի աշխարհականներուն մէջ ամենէն երևելին է, և վերջին տարիներս շատ բան ըրաւ աշխարհիս մէջ մաքուր կրօնքի յառաջացման համար :

Մր. Մուսիի կեանքը մարդիկ մեղքէ ազատելու նուիրուած էր : Յայտնի կը տեսնուէր թէ իր շահը կամ հաճոյքը մոռցած՝ անդադար կ'աշխատէր մարդիկը յորդորելու որ ընդունին Քրիստոսը իբրև իրենց փրկիչը և իրենց կեանքերը անոր ծառայութեան նուիրեն : Եւ շատ մեծ էր Անգղիոյ և Ամերիկայի մէջ թիւն այն մարդոց որոնք մոլեկան և աշխարհասէր կեանքերէ ազատուեցան այս մարդուն ազդեցութեան շնորհիւ :

Անիկա նաև շատ միջոցներ հնարող անձ մըն էր : Իր գործը կատարելու համար միւլեոյն մեթոտով չէր շարժեր, հապա բարեք ընելու նոր միջոցներ, նոր կերպեր կը մտածէր միշտ : Գործնական մարդ, հաւատքի մարդ էր ան, ուստի իր բոլոր ձեռնարկները յաջողեցան : Շիբակոյի Աստուածաբանական ճեմարանը, Քրիստոսեայ պաշտօնեաներ հանելու համար, Նորթհեմփտի մէջ այլևայլ ժողովները ամառուան եղանակին, ուսանողներու, եկեղեցականներու և ուրիշներու Քրիստոնէական կեանքը զօրացնելու նպատակաւ, անոր սկսած բարի ձեռնարկներուն կարգէն են, և կը շարունակուին անոր մահէն ետքն ալ : Նախորդ երեսին վրայ խօսած ենք Մր. Մուսիի հիմնարկած ուրիշ մէկ հաստատութեան վրայ :

---30---

ԹՈՉՈՒՆԻ ՄԸ ՍԻՐՈՐԳԸ

Սկովտացի պատանի մը ձիու մագէ ծուղակ մը լարեց անտառին մէջ և առաւօտ մը տեսնելով որ էգ տորդիկ (արտըճ գուշու) մը բռնուած է, շատ ուրախացաւ : Տուն տարաւ թռչունը, դրաւ մեծ կողովի մը մէջ որ աղէկ օդ կ'առնէր, և անոր բերանը գոցեց շատ մը չուաններ անցընելով կափարիչին վրայէն : Յետոյ վանդակը պատուհանին մօտը կախեց գամէ մը : Կէսօրէն ետքը տղին մայրը կանչեց քարոզիչը, որպէս զի համոզէ իր որդին թռչունը արձակելու : Մինչ քարոզիչը թռչունը կը դիտէր կողովին ծակերէն, իր ուշադրութիւնը ուրիշ տորդիկի մը դարձաւ որ պատուհանին դիմացը ոստի մը վրայ նստած էր :

«Այո», պոռաց տղան, «և անիկա իմ ետևէս դէպ ի տուն եկաւ անտառէն»:

Բռնուած թռչունին վարուժանն (արու ընկեր) էր անիկա, որ հաւա տարմարար իր ընկերին հետևած էր դէպ ի անոր բանտը, թառած էր այն պիտի տեղ մը ուրկէ կրնար տեսնել զանիկա, և բանտարկուածը կը լսէր անոր ցաւագին, տխուր եղանակները որ անոր զգացած վիշտը կը ցուցնէին:

Քարոզիչը խրճիթին քիւէն (սաչագ) կախեց վանդակը և իրենք ետ քառուեցան դիտելու համար թէ ի՞նչ պիտի պատահէր: Քանի մը վայրկեանէն բանտարկեալը եղանակ մը սուլեց իբրև պատասխան իր վարուժանին տխուր երգերուն: Վարուժանին ուրախութիւնը անսահման էր: Երառին ամենէն բարձր ճիւղին գագաթը ցատկելով, երկու երեք խանդավառ երգեր երգեց, և այնուհետև կողովին բերնին վրայ իջաւ, որուն ծակէն բանտարկեալ թռչունը իր գլուխը և վիզը դուրս հանած էր: Այն ատեն սրտաշարժ տեսարան մը պարզուեցաւ: Արու թռչունը, բանտարկեալին հետ կտուցով հազորդակցեցէ և մնչելէ ետքը, յարդարելով անոր փետուրները և փայփայելով անոր պարանոցը, և բարձր ժամանակը թռթոցեցելով իր թևերը և խրախուսիչ եղանակ մը երգելով, յանկարծ ուրիշ դիրք մը առաւ: Իր թևերը ամփոփեց, շտկուեցաւ, և սկսեց կտցել և քաշել կողովին բերնի շուրջները: Արու թռչունին հրատապ սէրը և իր բանտարկեալ ընկերը ազատելու համար ըրած ջանքերը շարժեցին քարոզիչին, տղին մօրը և մինչև անգամ տղին սիրտը: «Ես պիտի արձակեմ թռչունը», ըսաւ տղան կարեկցութեան ձայնով մը, երբ տեսաւ թէ մայրը աչքերը կը սրբէր իր գոգնոցով:

Կողովը տարուեցաւ հոն ուր բռնուած էր թռչունը: Արու տորդիկը անոր հետևեցաւ, ատեն ատեն գրեթէ դպչելով տղին որ կը տանէր կողովը, և ճուռողելով, իբր թէ վտահացնելով իր ընկերը թէ տակաին քովը կը գտնուէր ինք: Երբ ծուղակին քով հասան, քարոզիչը սկսաւ քակել այն շատ մը կնճռոտ կապերը որոնցմով հաստատուած էր կողովին կափարիչը, մինչ արու թռչունը կաղնիի ճիւղի մը վրայ թառեցաւ հազիւ վեց ոտք հեռու, և անշարժ ու լռիկ կրնայէր չուանները քակելու գործին վրայ: Կողովին կափարիչը վերցուածին պէս էք տորդիկը դուրս նետուեցաւ սարսափի և ցնձութեան ճիւղով մը, արու տորդիկն ալ անոր հետևեցաւ աղեղէ

արձակուած նետի պէս, և երկուքն ալ աներևութացան խիտ ծառերուն ետևը: Ասիկա պատուական դաս մը եղաւ տղին, այնպիսի դաս մը զոր չմոռցաւ երբեք:

ԳԱՏԱՊԱՐՏԵԱԼԻՆ ՈՐԴԻՆ
Քանի մը մարդիկ տաժանակիր աշխատութեան դատապարտուած էին այլևայլ ոճիրներու համար, և երբ օր մը վիճենայի փողոցներէն մէկը նորագելու գործին կը զբաղէին, այդ փողոցէն անցաւ համակրելի դէմքով, լաւ հագուած երիտասարդ մը: Կանգ առաւ դատապարտեալներէն մէկուն քով, գրկեց զանիկա սիրով և ճամբան գնաց: Կառավարական պաշտօնեայ մը պատուհանէ մը կը նայէր այդ ատեն, և շատ զարմացաւ երիտասարդին ըրածին վրայ: Ուստի երիտասարդը քովը բերել տուաւ, և ըսաւ, «Բարեկամ, շատ տարօրինակ բան էր ըրածդ, որ դատապարտեալ մը գրկես փողոցին մէջ: Տեսնողները ի՞նչ կը խորհին քու վրադ»: Երիտասարդը լուռ կեցաւ քանի մը վայրկեան, բայց շուտով ինքնիրեն գալով պատասխանեց, «Տէր իմ, ես միայն պարտականութեան զգացումիս և սրտիս հետևեցայ, վասն զի դատապարտեալը հայրս է»:

Պաշտօնատարը, այս խօսքերէն զգածուելով և զմայլելով երիտասարդին ազնիւ վարմունքին վրայ, փութաց կայսրին պատմել դէպքը: Վեհապետն զմայլեցաւ այս որդիական վարմունքին ազնուութեան վրայ և դատապարտեալին որդին կարևոր պաշտօնի մը վրայ դրաւ: Ուզեց ցուցնել այս կերպով թէ ոճրին պատիժը պէտք է միայն ոճրագործը կրէ և ոչ թէ ուրիշներ ալ, և թէ բան մը պէտք չէ որ արդէր ըլլայ կատարելու Աստուածային օրէնքը, «Պատուէ քու հայրդ ու մայրդ»:

ԱՆՊԵՏ ՄՏԱՏԱՆՁՈՒԹԻՒՆ ՄԸ
Ատենով կար մարդ մը և անոր կինը որ ուզեցին օր մը անցնել իրենց բարեկամներէն մէկուն տունը, որ իրենց մէջ քանի մը մղոն հեռու էր: Ուստի սիրուն առաւօտ մը ճամբայ ելան այդ այցելութիւնն ընելու համար: Բայց տնէն քիչ մը հեռանալէ ետքը, կինը միտքը բերաւ շատ հին կամուրջ մը որուն վրայէն անցնելու էին, և որուն համար ըսուած էր թէ շատ ապահով չէր, ուստի սկսաւ անմիջապէս հոգ ընել և միտքը տանջել անոր համար: «Ի՞նչ պիտի ընենք այդ կամուրջը,

ես բնաւ չեմ համարձակիր անոր վրայէն քալել, և դետէն անդին չենք կրնար անցնիլ ուրիշ կերպով», ըսաւ իր հրկանը: «Ո՛հ», ըսաւ մարդը, «ես մոռցած էի այդ կամուրջը, գէշ բան է: Սեպենք թէ փլաւ, և մենք ջուրն ինկանք և խեղդուեցանք», «Կամ մանաւանդ», ըսաւ կինը, «սեպենք թէ դուն փտած տախտակի մը վրայ կոխեցիր և սրունքդ կտորեցիր, ի՞նչ պիտի ըլլամ ես և պէպէքը»: «Չեմ գիտեր», պատասխանեց մարդը, «ի՞նչ պիտի ըլլանք, ես պիտի չկրնամ գործել, և մենք սովատանջ պիտի մեռնինք»:

Այսպէս առաջ քալեցին անոնք հողալով, հողալով, մինչև որ եկան կամուրջին, և ահա ի՞նչ տեսնեն աղէկ տեսան որ զանիկա վերջին անգամ տեսնելէն ի վեր անոր տեղ բոլորովին նոր կամուրջ մը շինուած էր, և իրենք ապահով անցան անոր վրայէն: Այն ատեն հասկցան թէ պարապ տեղը այնչափ հոգ բերել սիրա հատուցել էին: Ասիկա ճիշդ այն է ինչ որ կը նշանակէ սա առակը, «Երբեք մի անցնիր կամուրջէն մինչև որ անոր քով չգաս»: Երբեք մի վատներ քու ժամանակը հոգ ընելով, միտքդ տանջելով, թէ կարելի է այսինչ այնինչ չարիքը պիտի պատահի:

ՉԵՉԱՔԱՐ
Գիտէ՞ք թէ ի՞նչպէս գոյութեան եկաւ այս մասնաւոր տեսակ ճարտ. Չեչաքարը (փոմըա թաշը), որ հասարակ քար մը եղած է, իրօք նշանաւոր բան է: Չեչաքարի ամէն մէկ կտոր ժամանակաւ լավա էր հրաբուխի մը խորութեան մէջ: Բայց երևան չգար հրաբուխէ միայն, հապա նաև ծովուն յատակէն: Հրաբուխներ կան, որ ծովուն տակը կը գտնուին, և իրենց կատարութիւնը կը ժայթքեն Ովկիանոսին ներքև այնպիսի մեծ խորութիւններու մէջ որ անոնց ազդեցութիւնը չհասնիր մինչև մակերեսը: Անոնց արձակած չեչաքարը, ջուրէն թեթեւ ըլլալուն համար, ծովուն մակերեսը կ'ելլէ և այսպէս ձեռք կը բերուի: Տեսնուած է ծովուն երեսը չեչաքարին երեք հարիւր մղոն տարածութեամբ տեղ գրաւելը ցամաքէ և կամ ծանօթ ուէ հրաբուխէ շատ հեռու:

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ, կանխիկ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտիանոսաց Ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Բ. ԿՐԻՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԼՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱԿԻ Ա. ՅԱՆՈՐ ԳՕՑԱՅԱՆ
Ֆինանսները Եօզուշու, Ամերիկան Խան